ՔԱՂՎԱԾՔ

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ
2024Թ. ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Համատեղ ներկայության կարգով իրական ժամանակի ռեժիմում Zoom հավելվածի միջոցով
Երկուշաբթի, 30 հունիսի 2025թ., 14:05

Ժողովի քարտուղար նշանակվեց Հաշվիչ հանձնաժողովի նախագահ Աննա Բադոյանը:

Հարց 5. «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ 2024թ. ֆինանսական արդյունքներով տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունում:

Գագիկ Զաքարյանը ներկայացրեց, որ հաշվի առնելով Բանկի 2024թ. գործունեության ֆինանսական արդյունքները, 27.05.2025թ. Բանկի Խորհրդի որոշմամբ բաժնետերերի ընդհանուր ժողովին առաջարկվում է՝

- Բանկի կուտակված շահույթից սովորական անվանական բաժնետոմսերով վճարել տարեկան շահութաբաժիններ դրամով՝ 7,777,340,300 ՀՀ դրամ ընդհանուր գումարի չափով, մեկ բաժնետոմսի մասով 40,66 ՀՀ դրամ հաշվարկով,
- տարեկան շահութաբաժինների վճարումն իրականացնել 01.07.2025թ.-ից մինչև 31.07.2025թ. ընկած ժամանակահատվածում սովորական անվանական բաժնետոմսերի սեփականատերերին, որոնք ընդգրկվել են Բանկի բաժնետերերի ռեեստրում՝ Բանկի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ,
- պահուստային հիմնադրամին հատկացնել Բանկի 2024թ. զուտ շահույթի 5%-ը:

Հաշվի առնելով Բանկի 2024թ. գործունեության ֆինանսական արդյունքները՝ բաժնետերերի ժողովը, քվեարկության հետևյալ արդյունքներով, որոշեց՝

- Բանկի կուտակված շահույթից սովորական անվանական բաժնետոմսերով վճարել տարեկան շահութաբաժիններ դրամով՝ 7,777,340,300 ՀՀ դրամ ընդհանուր գումարի չափով, մեկ բաժնետոմսի մասով 40,66 ՀՀ դրամ հաշվարկով,
- տարեկան շահութաբաժինների վճարումն իրականացնել 01.07.2025թ.-ից մինչև 31.07.2025թ. ընկած ժամանակահատվածում սովորական անվանական բաժնետոմսերի սեփականատերերին, որոնք ընդգրկվել են Բանկի բաժնետերերի ռեեստրում՝ Բանկի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ,
- պահուստային հիմնադրամին հատկացնել Բանկի 2024թ. զուտ շահույթի 5%-ը:

կողմ՝ 173.431.140 ձայն կամ մասնակիցների ձայների 99.97%
դեմ՝ 0 ձայն
ձեռնպահ՝ 47.680 ձայն կամ մասնակիցների ձայների 0.03%
անվավեր՝ 99.928 ձայն

Աննա Բադոյանը հայտարարեց, որ ժողովի օրակարգի բոլոր հարցերը քննարկված են, որոշումներն ընդունված են:

Ժողովի նախագահ Գարիկ Զաքարյանը շնորհակալություն հայտնեց բոլորին մասնակցության համար և առաջարկեց ցանկացողներին տալ հարցեր: Հարցեր չհնչեցին:

Բաժնետերերի ժողովն ավարտվեց ժամը 15:00-ին:

_____	_____
Գագիկ Զաքարյան **Նախագահ**	**Աննա Բադոյան** **Քարտուղար**

ք. Երևան, 1 հուլիսի 2025թ.